Աշխարհագրություն-2017թ.

Դպրոցական փուլ

/տևողությունը 120 րոպե/

9-րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1.Տեղանքում կարելի է կողմնորոշվել.

1.Նեպտուն մոլորակով, 3.աստղակերպերով,

2.Բևեռային աստղով, 4.նորալուսնով:

2.Աշխարհագրական երկայնությունները լինում են.

1. $0\text{-}90^0$, 2. $0\text{-}180^0$ 3. $0\text{-}270^0$, 4. $0\text{-}360^0$:

3.Երկրի, մայրցամաքների, առանձին պետությունների բնությունը, այնտեղ ընթացող երևույթներն ուսումնասիրում է.

1. աստղագիտությունը,
2. ֆիզիկական (բնական) աշխարհագրությունը,
3. քարտեզագրությունը,
4. տնտեսական և սոցիալական աշխարհագրությունը:

4. Եթե քարտեզի անվանական մասշտաբը 1 սմ-ում 20 կմ է, ապա դրա թվային մասշտաբը կլինի.

1. 1 : 20 000, 3. 1 : 2 000 000

2. 1 :200 000, 4. 1 : 20 000 000

5. ՛՛Գետ-օվկիանոս՛՛ զույգերից ընտրել ճիշտը.

1. Կոլորադո -Ատլանտյան, 3. Կոնգո – Հնդկական,

2. Ինդոս -Խաղաղ, 4. Լենա-Հյուսիսային սառուցյալ:

6. Ժամային գոտիները սահմանազատվում են.

1.արևադարձերով, 3.միջօրեականներով,

2. հասարակածով, 4. զուգահեռականներով:

7. Նստվածքային օրգանական ծագման ապար է.

1. կավը, 2. տուֆը, 3. ավազը, 4. քարածուխը:

8. Բնութագրումով որոշել պետությունը.

Տարածքով գերխոշոր պետություն է: Հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով: Աչքի է ընկնում երկաթաքարի արդյունահանմամբ և արտահանմամբ: Ո՞ր պետությունն է.

1. Բրազիլիա, 3. Ավստրալիա,
2. Եգիպտոս, 4. Չինաստան:

9. Ո՞ր պնդումն է սխալ.

1. Արաքսը սկիզբ է առնում Ծաղկանց լեռների սառնորակ աղբյուրներից,
2. Արաքսի ձախակողմյան վտակներից են Հրազդանը, Արփան, Ողջին,
3. Արաքսն անվանել են ՛՛կամուրջներ չհանդուրժող՛՛ գետ,
4. Ստորին հոսանքում Արաքսը հոսում է դաշտավայրով:

10. Ճապոնացիների ազգային կրոն է.

1.սինթոյականությունը, 2. կոնֆուցիականությունը,

3. քրիստոնեությունը, 4. հուդայականությունը:

11. ՛՛Մշակաբույս – առաջատար երկիր՛՛ զույգերից ընտրել սխալը.

1. կաուչուկատու հևեա – Մալայզիա, 2. վուշ – Ռուսաստան,

3. եգիպտացորեն – ԱՄՆ, 4. սուրճ -Եմեն:

12. Ո՞ր պնդումն է սխալ.

1. զարգացած երկրներում, բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին.

2.եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը,

3. վերարտադրությունը կոչվում է պարզ, երբ ծնելիությունը հավասար է մահացությանը,

4. զարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգը:

13. ՆԱԵԿ – ի անդամ երկիր չէ.

1. Քուվեյթը, 3. Գերմանիան,

2. Վենեսուելան, 4. Ինդոնեզիան:

14. ՀՀ ո՞ր մարզում է Խոսրովի արգելոցը.

1. Տավուշի, 3. Սյունիքի,

2. Արարատի, 4. Լոռու:

15. ՀՀ-ում գունավոր մետաղաձուլության ճյուղ չէ.

1. մոլիբդենի արդյունաբերությունը,

2. պղնձաձուլությունը,

3. ոսկու արդյունաբերությունը,

4. ցինկի արդյունաբերությունը:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Օդի բացարձակ խոնավությունը 20գ/մ^3 է, իսկ այն հագեցնելու համար անհրաժեշտ է 40գ: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

17. Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ. 33^{0}30՛ և արլ. ե. 44^{0}30՛: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22 – ին, կեսօրին:

18. Երկրի տարածքը 48 000 կմ^2 է, իսկ բնակչության թիվը՝ 2,4 մլն մարդ: Որոշել բնակչության միջին խտությունը:

19. Որքա՞ն է 10 տոննա նավթին համարժեք պայմանական վառելիքի քանակը (տոննա), եթե նրա ջերմային գործակիցը 1,5 է:

20. Գետի լայնությունը 20 մ է, միջին խորությունը՝ 100 սմ, իսկ ջրի արագությունը՝ 5 մ/վրկ: Որոշել գետի ծախսը: